գտանէ կամ զտեղն ցուցանէ և կամ ըմբռնեալ բերցէ, թէ խպահութիւն կամ յէնկիչէրութիւն, եւ Ռ ղուռուշի զիամէթ և այլ ինչ որ խնդրէ ի թագաւորէն՝ առնու։ Անյապաղ որոնելով յամենայն տեղիս յուզեալք ի թագաւորէն և ի զօրացն, և թագաւորն եւս վրէժխնդիր եղև վասն նոցա։ Եւ ի գիշերիս յայսմ որ Դշի լուսանայր՝ զՄալիճէի օղլին եւս սպանեցին ի յէտիզուլան և անդ ձգեցին Գ օր, որ ուռաւ և հոտեցաւ և ապա հրաման տվին վերացնելոյ. Ժ աւուր մանզուլ եղած էր տէֆտէրտարութենէ։

Եւ առաւօտուս Դշի օր (27 ՓԵԲՐ.) դաս ասաց Եղիազար վարդապետն ի Սուրբ Նիկողոս։

Եւ մունետիկն աղաղակեաց յամենայն տեղիս թէ Բացվի՛ չարսուն և խանութքն. և բացաւ օրս և չընչինս եւս գնացի ի խանութ, եւ հանդիպայ ի ճանապարհին զօրագլխացն այնոցիկ որ այսքան օրս խօսակցէին առ թագաւորն ԺԲ և ԺԴ արք, որ արարին զայս յըսպահոցն, եւ գլուխ սոցա Շամլը Հասան աղա եւ Մէհէմէտ աղա. ամենեքեան սոքա ի թագաւորէն կապայ ըզգեցեալ եւ անցեալ գնացին։ Յետ Բ ժամու նստեալ կայաք ի խանութ և տեսաք զի հասասպաշին և սուպաշին ըմբռնեալ են զՄուլքի խաթունն ի պարտէզ իւր Դ ծառայիւք միայն և բերեալ ի բանտն խեղդամահ արարեալ և եդեալ ի վերայ ձիոյ մի և ձգեալ ի վերայ կարպետ և առեալ տանէին ի կախել ի ծառն յայն, յորում գնոսա կախեալ էին մօտ ի չաւուշպաշին, եդեալ ի ճուվալի մէջ մինչև ի մէջքն, և միջացն կախեցին՝ ի միջացն ի վեր բաց։ Եւ արդ զի՞նչ ասասցուք, քանզի սոքա էին փոխող վէզիրին և աղային, տէֆտէրտարին և ըռէյիզին և պէկլէրպէկոցն եւայլն ըստ կարգի նոցա. և փաշայութիւն դրսի երկրին և պարոնութիւն՝ սոցա ձեռամբն լինէր. և վէզիրն թէ տար ումեք մանսուպ և դնէր պէկլէրպէկի,